

րու համար 10 ոսկի տուգանք կը սահմանուի : — 1882 Մայիսին Վանքի վանքին հարկը 40 է աւելի վանքեր այցելով : Գարձին՝ նոր փորձանք մը կ'սպասէր իրեն . կառավարութիւնը ձեռք անցուցած էր Խիզանու «Ռուսումնասիրաց Ընկեան» (որուն գործադիր ժողովի ատենապետն էր Վանքի վանքի վարդապետը որ **Հայաստան** բառը պարունակելուն՝ պատճառ կ'ըլլայ — իր յեղափոխականի գործ — Վանքի ձերբակալման . սակայն ինք երկու տարի առաջ Ռուսմանիոյ հպատակութիւնն ընդունած ըլլալուն՝ ազատ կ'արձակուի : Նոյն կանոնագիրը Պատրիարքարանէ վաւերացուած ըլլալով, Ներսէս Պատր. կը միջամտէ «բազիր» ով մը . սակայն դատը կրկին կը շարունակուի Վանքի տպարանի փակմամբ և տուգանքի դատապարտութեամբ : Վերաքննութեան, ապա վճռաջինջ ատենաներու դիմումով, քէ՛ ընկերութիւն և քէ տպարան (մինչեւ 1891) կը թոյլով շարունակել : — 1884 ին կ'ընտրուի երեսփոխան Աղբամարէ, ըստ 30 տարին լրացուցած ըլլալուն՝ ղեկավարուի : 1890 ին Նազըմ Բաշա ուսման ղեկավանտունն կը պահանջէ Վանքի Օսմանեան հողէն ելլելը, գաղտնի հրատարակութեանց տարածիչն ըլլալու ծանր անբաստանութեան տակ : Նոյն տարին Գեղտնմբերին կը փախչի մայրաքաղաքէն, պաշտօնապէս վտարուած ըլլալու համար, և յաջորդ տարին Չերազի L'Arménie մէջ **Պահլաւունի** ստորագրութեամբ հրատարակութեան կու տայ Բրօք. Տքք. Վանդեռի և նշ. Լորտի մը հետ ըրած տեսակցութիւնը : Վանքի կ'անցնի Քեօսքէնէ ուր կը կազմէ քատրասիրաց խումբ մը Գում Գարուցի փախստականներէ և Գուրեանի ու Պէշքաշլեանի քատրերգութիւնները համառօտելով կը բեմադրէ Ռուսմանիոյ քանի մը քաղաքները : Հայ գաղութին մէկ մասը տանկ. բնա ջնակնալուն՝ կը գրէ «Արամ» առամբ գոր կը ներկայացունէ Ռուսմանիոյ և Աստրիոյ-Հունգարիոյ հայաբնակ քաղաքները : 93 ին Պօլիս կը դառնայ ուր կը բանտուի 101 օր, և իր ղեկավանտան միջամտութեամբ ազատ կը բողոքի Թուրքիայէ դուրս ելլելու որոշմամբ, ըստ նկատի առնուելով իր գրատան վաճառման դժուարութիւններն՝ օրուան պատրիարքին ու ղեկավանին միջնորդութեամբ Վանքի վանքի մնայ մայրաքաղաքս, ազգ. գործերու ջխտանուելու պայմանաւ : — 1883 էն է որ կ'սկսի դասագիրքերու պատրաստութեան և հրատարակութեան . — **Հարցիկ Բերական, Սիրուն գրասարան, Ոսկեմասնէնիկ, Մարգրիտներ մանկապարտեզի-ձաղկոցի տղոց, Գեղեցիկ գրասարան** (տանկախօս տղոց), Մանկավարժական քերականութիւն, Գոհար մատենիկ, Արծար մատենիկ, իրագիտութեան դասեր, Նեվուսուլ Էրմէնի Էլիֆալեի (թուրք ուսանողաց հայերէնի ուսուցման դասագիրքը), Գասեր ազգ. պատմութեան, Կրօնի ուսում, Աշխարհագրութիւն, Ապարանջան (աղջիկներու ընթերցարան) և իր զակին նուիրուած քերական մը «Ա. Բ. Գ. Ֆարութիւն Մարգարեանի» անուն : Ասոնցմէ գատ իր ծախքով հրատարակած է ուրիշներու գանազան դասագիրքերը որոնցմէ իշխնք «Մայրեր-շաֆք մերոս»ը : 1900 ին կ'ամուսնանայ՝ հակողութենէ ազատելու համար : — 1910 ի ամբան հրատարակած է **Նոր Բեմ** պարբերականը (5 թիւ), գոր ընդհատուած է Եգիպտոս ուղևորութեանն առթիւ . իսկ 1879 ին խնամօք խմբած և վիճակի լոյս ընծայած է 50 նշ. ազգայիններու մեծադիր խմբանկարը, կորուստէ փրկելով շատ մը ազգ. յայտնի գործիչներ : — 1879-91 ին իր տպարանը դրոշմուած են . — Բառարան յատուկ անուանց (Ն. ճիվանեանի) ի յիշատակ իր հօր, Նուէր Կաղանդի, Աւետարան, Թօշնեայ ձաղիկ, Պարտաճանաչութիւն, Դիտակ 1911 տարւոյ, և այլն :



114. **Օգոսէն Խօճասարեան** \* — Հայր՝ ազգ. երեսփոխան և ուսուցիչ Հայկ Խօճասարեանի : Ծնած է 1833 ին Սամարիա և մեռած 21 Ապրիլ 1878 ին : — Սո. Փափագեանի ժամանակակից և անոր պէս վառվռուն ու խիզախ այս հրապարակագիր-երեսփոխանին կեանքն ուսումնասիրել դուրս ըլլալով մեր նպատակէն՝ կը բաւականանանք համառօտակի իշխելով միայն իր տպարանական կարճատե գործունէութիւնը՝ Եռսուֆեան խանի մէջ, ուր բաւական ատեն հրատարակած է իր **Օրագիրը**, նաև 1873 ին «Բացատրութիւն հրամարագրի ազգ. քղբ. ժողովոյ» գրքովը : — Օգոսէն խմբագրած է դարձեալ **Նոր Գար** թերթը : — Իր մասին տե՛ս նաև 122 բուսանամար՝ **Միհայէլ Սարբեան** :

